Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 35

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2008թ. նոյեմբերի 4-ին ժամը 16:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Մուշեղ Թումասյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Հրանտ Բեգլարյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ

Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ

Նիստին հրավիրված էր.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Դիանա Մնացականյանը	ՀՀ վարչապետի մամլո խոսնակ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի նոր կազմի (2008-2009թթ.) ընտրությունների արդյունքների ներկայացում:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի թափուր պաշտոնի համալրման համար անցկացված մրցույթի արդյունքների քննարկում և հաստատում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի վերանայված տարբերակի քննարկում և հաստատում:

4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված նախագծման և տեխնիկական վերահսկողության պայմանագրերի փոփոխության մասին տեղեկատվության ներկայացում:

5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի «Ջրից դեպի Շուկա» բաղադրիչի «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում խորհրդատուի կողմից ներկայացված «Նախնական հաշվետվության» քննարկում և հաստատում:

6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի Վարկային ենթաբաղադրիչի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

7. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի գնումների պլանի փոփոխության քննարկում և հաստատում:

8. Այլ հարցեր:

   ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի շրջանակներում Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիային տարեկան կտրվածքով ներկայացվող «Տարեկան լրացուցիչ հաշվետվության» ներկայացում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը ներկայացրեց, որ 2008թ. սեպտեմբերի 27-ին կայացել է ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի ընտրությունը, որի արդյունքում առավելագույն ձայներ հավաքած տասնհինգ անձինք դարձել են Շահառուների խորհրդի անդամ: Սեպտեմբերի 13-ի ՇԽ նիստի ընթացքում ընտրվել են ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի ՇԽ հինգ հետևյալ պատվիրակները՝

- Կարեն Զադոյան
- Վիկտոր Ենգիբարյան

- Շիրակ Միքայելյան
- Արման Ոսկանյան
- Պողոս Շահինյան

Կառավարության հոկտեմբերի 30-ի նիստում ընդունվել է կառավարության համապատասխան որոշում՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նոր կազմը հաստատելու վերաբերյալ (N 1228-Ն):

Կառավարման խորհրդի անդամներին ի գիտություն տեղեկացվեց նաև, որ հինգ պատվիրակներից մեկը՝ Պողոս Շահինյանը, չի մասնակցում տվյալ նիստին, քանի որ գտնվում է գործուղման մեջ: Արա Հովսեփյանն առաջարկեց, որպեսզի ներկա պատվիրակները հակիրճ ներկայացնեն իրենց և իրենց կազմակերպությունները:

Վիկտոր Ենգիբարյանը ներկայացրեց, որ ավարտել է ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետը, հետագայում ուսումը շարունակել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, ներկայացնում է «Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ն, որը հիմնադրվել է երեք տարի առաջ և հանդիսանում է եվրոպական նույնատիպ շարժման հետնորդը Հայաստանում: Կազմակերպությունն ունի ավելի քան 1000 անդամ և վերջինիս գործունեության հիմնական նպատակն է հանդիսանում Հայաստանի զարգացումը և եվրոինտեգրումը: Ընկերությունը հիմնականում ֆինանսավորվում է ստեղծված դուստր ձեռնարկության ծավալած գործունեությունից ստացված եկամուտներից:

Շիրակ Միքայելյանը ներկայացրեց, որ ավարտել է Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը, ներկայացնում է «Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ն, որը ստեղծվել է 2001թ.: Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են աղքատության հաղթահարումը, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումը, երիտասարդության և կանանց խնդիրները: Երեք տարի է ընկերությունն իրականացնում է դրամաշնորհային ծրագրեր՝ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում: Ընկերությունն ունի 20 անդամ և 220 կամավորական, հիմնականում ֆինանսավորվում է բիզնես սեկտորի ներդրումների և դրամաշնորհների հաշվին:

Արման Ոսկանյանը ներկայացրեց, որ ավարտել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետը, ներկայացնում է «Տավուշի զարգացման» ՀԿ-ն, որը ստեղծվել է 2002թ.: Ընկերության հիմնական գործունեությունը ծավալվում է Տավուշի մարզում, իրականացնում է ինտերնետ ցանցի ապահովում, խորհրդատվություն և այլն: Ընկերությունն ունի 25 աշխատող, 300 կամավոր:

Կարեն Զադոյանը ներկայացրեց, որ ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը և հանդիսանում է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի հիմնադիրներից մեկը: Կազմակերպությունը տրամադրում է իրավական խորհրդատվություն, իրականացնում է երիտասարդ սերնդի կրթություն, ընդհանուր հասարակության իրավագիտակցության բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Ընկերությունն ունի գրասենյակների ցանց մարզերում և վայելում է բարձր համբավ միջազգային կազմակերպությունների շրջանակում: Կազմակերպության անդամներ են հանդիսանում գործող փաստաբաններ, դատավորներ, դատախազներ, ինչպես նաև երիտասարդ ուսանող իրավաբաններ: Կազմակերպության բյուջեն ձևավորվում է դրամաշնորհներից, անդամավճարներից, իրավաբանական ընկերությունների գործունեությունից ձևավորված եկամուտից:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ընդունել ի գիտություն ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի և կառավարման խորհուրդ պատվիրակների ընտրությունների արդյունքները:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը կազմակերպել է գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթ: Մրցույթի անցկացման համար ձևավորվել էր միջգերատեսչական մրցութային հանձնաժողով, որի կազմում ընդգրկված էին ներկայացուցիչներ ՀՀ կառավարության աշխատակազմից, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ից, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի կազմից: Մրցույթին մասնակցության հայտ էին ներկայացրել 39 թեկնածուներ, որոնցից մրցութային հանձնաժողովը կարճ ցուցակում ընդգրկել և հարցազրույցի էր կանչել 9-ին: Հարցազրույցի արդյունքում մրցութային հանձնաժողովն ընտրել էր առավելագույն միավորներ հավաքած երեք թեկնածուների:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ կարճ ցուցակում ընդգրկված թեկնածուները հրավիրվել են ՀՀ կառավարություն և պատրաստ են կառավարման խորհրդում հարցազրույցի:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ինչպիսի՞ հիմնական պարտականություններ է ունենալու գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը պատասխանատու է լինելու ինչպես վարչական, այնպես էլ ծրագրային ոլորտների համար, մասնավորապես՝ Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի իրականացման համար:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նախ կարծիք հայտնեց այն մասին, որ մրցութային հանձնաժողովն արդեն իսկ գնահատել է թեկնածուների մասնագիտական հմտությունները և առաջարկեց հարցազրույց անցկացնել և գնահատել վերջիններիս կառավարչական հմտությունները:

Երեք թեկնածուների հետ հարցազրույց անցկացնելուց հետո կառավարման խորհուրդը քննարկեց ստացված արդյունքները:

Քննարկումների արդյունքում **միաձայն որոշվեց՝** հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի կատարած աշխատանքը և եզրակացությունը, ինչպես նաև անցկացված հարցազրույցի արդյունքները, փաստել, որ ներկայացված երեք թեկնածուներն էլ համապատասխանում են պահանջված չափանիշներին և հաստատել արդյունքները:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հետաքրքրվեց, թե նախկինում կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացված Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի վերանայված տարեբերակի նախագծի վերաբերյալ ինչպիսի՞ վիճահարույց հարցեր կային:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ վիճահարույց հարցեր չկային, պարզապես անհրաժեշտ էր կատարել որոշակի ճշգրտումներ:

Արամայիս Գրիգորյանն առաջարկեց հնարավորության պարագայում քննարկել նաև փակ դրենաժների մաքրման և վերականգնման խնդիրը, քանի որ վերջիններս գտնվում են անմխիթար վիճակում և ավելի քան տաս տարի է չեն շահագործվում:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ քանի որ պատրաստ չեն նախագծերը և փակ դրենաժները ուսումնասիրված չեն, ուստի հնարավոր չէ ասել վերջիններիս իրական վիճակն ինչպիսին է: Նախնական, չուսումնասիրված տվյալներով փակ դրենաժների մաքրման համար անհրաժեշտ է նվազագույնը հավելյալ 5 մլն. ԱՄՆ դոլար:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ի՞նչ հաճախականությամբ են մաքրվում դրենաժային համակարգերը:

Անդրանիկ Անդրեասյանը տեղեկացրեց, որ բաց դրենաժները մաքրվում են երեք տարին մեկ անգամ, իսկ փակ դրենաժների մասին վերջնական պատասխան տալու համար անհրաժեշտ է ունենալ նախագծման արդյունքները:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ ՀՄԿ-ի կողմից վերանայված Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ենթակառուցվածք բաղադրիչի վերաբերյալ ներկայացվել է Իրականացման նամակ, որը ենթակա է ստորագրման ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի կողմից:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի վերանայված տարբերակը, ինչպես նաև հանձնարարել Ներսես Երիցյանին և Արա Հովսեփյանին ստորագրել և ՀՄԿ ուղարկել Իրականացման նամակը:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ նախատեսվում է Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված նախագծման և տեխնիկական վերահսկողության պայմանագրերից հանել տեխնիկական վերահսկողության հատվածը՝ համապատասխանաբար նվազեցնելով պայմանագրի գումարը և այդ գումարի շրջանակներում վարձել մեկ ընդհանուր՝ մասնագիտացված ընկերության: Վերջինս կնպաստի առավել որակյալ տեխնիկական վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև իրականացվող աշխատանքներին համապատասխան միջազգային մասնագետների ներգրավմանը, որն էլ իր հերթին կբերի նոր մասնագիտական հմտությունների և միջազգային փորձի փոխանակությանն ու խորացմանը:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե ինչու՞ է ի սկզբանե նախագծումն ու տեխնիկական վերահսկողությունը միասին նախատեսվել:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ նախկինում այս տարբերակն ավելի նպատակահարմար է համարվել, քանի որ ենթադրվել է, որ նախագծումն իրականացնող ընկերությունն ավելի արդյունավետ կկարողանա իրականացնել իր կողմից պատրաստված նախագծերի համաձայն կատարվող շինարարական աշխատանքի վերահսկողությունը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հետաքրքրվեց, թե ի՞նչն է հիմք հանդիսացել տվյալ դիրքորոշումը փոխելու համար:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ ոռոգման ոլորտում շինարարության առաջին պիլոտային ծրագրի, այն է՝ երրորդ կարգի ջրանցքների շինարության տեխնիկական վերահսկողություն իրականցնող տեղական ընկերության կողմից կատարված աշխատանքը բավականին ցածրորակ է եղել և հանգեցրել է համապատասխան տույժերի կիրառման, բացի այդ վերջին ամիսների ընթացքում ՀՄԿ-ի ճարտարագետները բավարարված չեն եղել տեղական նախագծողների աշխատանքի որակով, մասնավորապես նշելով, որ վերջիններս չեն

ներկայացրել նոր, արդյունավետ և առաջադեմ տեխնիկական լուծումներ, որն էլ ստիպել է ՀՄՀ-Հայաստանին և ՀՄԿ-ին անդրադառնալ այս հարցին:

Քննարմումներից հետո **միաձայն որոշվեց՝** համաձայնել և ի գիտություն ընդունել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված նախագծման և տեխնիկական վերահսկողության պայմանագրերի փոփոխության մասին տեղեկատվությունը:

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը նշեց, որ ներկայացված ծրագիրը էապես տարբերվում է նախկինում նախատեսված ծրագրի շրջանակներից, մասնավորապես՝ այն հիմնված է ընտրված ՁՕԸ-երի հետ ամենօրյա նպատակային, խորացված աշխատանքի վրա, այդ թվում նախատեսվում է իրականացնել ՁՕԸ-երի կառավարման համակարգի բարելավման պլանի մշակում և ներդնում:

Պարզաբանումից հետո **միաձայն որոշվեց՝** համաձայնել և ի գիտություն ընդունել աշխատանքների ծավալի փոփոխությունը, հանձարարել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ՊՈԱԿ-ին Euroconsult Mott MacDonald ընկերության հետ բանակցել պայմանգրի գումարի ավելացման չափի շուրջ և հավանություն տալ, որ վերջնական բանակցությունների արդյունքում Պայմանագրի արժեքն ավելանա համաձայնեցված գումարի չափով:

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ո՞ր մարմինն է իրականցնում վարկային բաղադրիչի վերահսկողությունը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ վերահսկող կառույց է հանդիսանում Գյուղական ֆինանսավորման կառույց ՕԻԳ պետական հիմնարկը, որը գործում է ՀՀ ֆինանսների նախարարության ենթակայության ներքո:

Արամայիս Գրիգորյանը հայտնեց, որ առավել նպատակահարմար է վարկային բաղադրիչի երկրորդ փուլում ևս անցկացնել աճուրդ, քանի որ դա հնարավորություն կտա պահպանել տրամադրվող վարկերի համեմատաբար ցածր տոկոսադրույքը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ Ուղեցույցը դեռ ավարտականացված չէ և մոտեցումները ենթակա են քննարկման:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ի՞նչն է վարկավորման հիմնական նպատակը:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ վարկային ծրագիրը նպատակ ունի աջակցել մատչելի և երկարաժամկետ վարկերի տրամադրմանը ֆերմերներին և գյուղատնտեսության հետ կապված բիզնեսներին, որոնք նպատակաուղղվելու են բարելավված ոռոգման և բարձրարժեք գյուղատնտեսության ոլորտում կատարվող կապիտալ ներդրումներին: Այն նաև նպատակ ունի քաջալերել վարկառուի վարկային կարիքների բավարարմանն ուղղված նորարարական մոտեցումների ներդրումը: Ակնկալվում է, որ Վարկային Ծրագիրը կօգնի վարկ տրամադրողներին զարգացնել երկարատև, որակյալ և փոխշահավետ հարաբերություններ, ինչպես նաև ընդլայնել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող ֆինանսական ծառայությունների շրջանակը:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե արդյո՞ք վարկային բաղադրիչի առկայությունն ու իրականացումը հանդիանում են ՀՄՀ-Հայաստան ծրագրի պարտադիր պայման:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ վերջինս չի հանդիսանում ծրագրի պարտադիր պահանջ:

Արամայիս Գրիգորյանն առաջարկեց, որպեսզի ՀՄՀ-Հայաստանն ի սկզբանե սահմանի վարկավորման տոկոսը, որին ՀՀ Վարչապետն ավելացրեց, որ այս դեպքում մրցույթի կդրվի վարկատուների կողմից մատուցվող ծառայության որակը:

Արա Հովսեփյանը մտահոգություն հայտնեց, որ հնարավոր է այս դեպքում խաթարվի առկա վարկային շուկան:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը պարզաբանեց, որ տվյալ գումարը շատ փոքր է և չի կարող էական ազդեցություն ունենալ վարկային շուկայի վրա, հետևաբար նման վտանգը բացառվում է: Միաժամանակ ՀՀ Վարչապետը նշեց, որ քանի որ այս գումարի սահմաններում հնարավոր չէ էական նպաստ բերել գյուղատնտեսության վարկավորմանը, ուստի առավել արդյունավետ կլինի այն ուղղել որևէ այլ ոլորտ, օրինակ՝ Ռոգման ենթակառուցվածքի ոլորտ:

Արման Ոսկանյանն ևս առաջարկեց հրաժարվել վարկի գաղափարից և գումարը տրամադրել գյուղացիներին որպես դրամաշնորհ:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ի գիտություն ընդունել ներկայացված տեղեկատվությունը և հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին ուսումնասիրել վարկային փաթեթի հետագա փուլերի արդյունավետությունը՝ ելնելով վարկային շուկայի առկա վիճակից, ՀՄԿ-ի հետ քննարկել գումարն այլ ոլորտ ուղղելու հնարավորությունը և կառավարման խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել տեղեկանք ստացված արդյունքների վերաբերյալ:

Օրակարգի 7-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետը հանձնարարեց բետոնի որակական չափանիշների գծով և նստվածքակուտակումների գծով կարճաժամկետ խորհրդատուների հաշվետվությունները պատրաստ լինելուց հետո ներկայացնել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդին:

Միաձայն որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի փոփոխված գնումների պլանը:

Օրակարգի 8-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Միաձայն որոշվեց՝ ի գիտություն ընդունել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի շրջանակներում Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիային տարեկան կտրվածքով ներկայացվող «Տարեկան լրացուցիչ հաշվետվությունը»:

Վիկտոր Ենգիբարյանը կառավարման խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության լիազորությունները տարանջատելուց հետո ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմում ՀՀ կառավարության ներկայացուցիչների թիվը վեցից դառել է յոթ՝ համապատասխանաբար ՀՀ ֆինանսների նախարար և ՀՀ էկոնոմիկայի նախարար, ուստի խախտվել է կառավարություն-քաղաքացիական հասարակություն համամասնությունը: Առաջարկվեց կառավարման խորհրդում ներկայացված քաղաքացիական հասարակության անդամների թիվը ևս ավելացնել մեկով:

Միաձայն որոշվեց՝ հանձնարարել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ՊՈԱԿ-ին Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի հետ քննարկել հավելյալ մեկ քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ներգրավման հարցը և դրական պատասխանի դեպքում ձեռնամուխ լինել այդ գործընթացի իրականացմանը:

Վիկտոր Ենգիբարյանը նաև հայտնեց, որ ըստ Կառավարման համաձայնագրի 1.3 (a) բաժնի, ծրագրի առաջին տարում որպես կառավարման խորհրդի նախագահ նշանակվում է ՀՀ Վարչապետը: Յուրաքանչյուր հաջորդ նախագահը պետք է լինի կառավարման խորհրդի քվեարկելու իրավունք ունեցող անդամ, որն ընտրվել է քվեարկելու իրավունք ունեցող անդամների կողմից:

Տեղեկատվության ներկայացումից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել, որ ՀՀ Վարչապետը կշարունակի պաշտոնավարել որպես ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ և հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին տվյալ հարցը ներկայացնել ՀՄԿ-ի հավանությանը:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը